

Պէտք է տեսնել, անձամբ զգալ այդ բոլորը: Փարիզից անցնող ամէն Հայ, որի հոգում դեռ չէ մարած վահագնեան կրակը, պէտք է այցելէ Հ. Յ. Գ. Տունը, որտեղից դուրս կը գայ հոգեպէս վերածնւած, հպարտ եւ նոր յոյսերով վառւած...:

— Զի բազում գործք արուքեան կան եւ ի մերում աշխարհի:

Մեր պատմահայր Մովսէս Խորենացիի այս խօսքերն են, իբրեւ խորհուրդ խորին, գրւած Հ. Յ. Գ. Թանգարանի մուտքի դրան վրա:

Ս. Վ.Ր.

ՅՈՒՆԵՆՆԵՐԻ ԱՌՈՒԻՒ

Յոբելեանի մասին... Պէտք է յոբելեաններ տօնել, քէ ոչ: Այս հարցի շուրջ կան տարբեր կարծիքներ մեր հասարակութեան մէջ:

Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է, նախ, ճշտել, քէ ի՞նչ յոբելեանների մասին է խօսքը՝ անհատների, քէ գործերի, դէպքերի ու հիմնարկութիւնների: Վերջինների նկատմամբ չենք կարծում, քէ տարակարծութիւն լինի — ի հարկէ, պէտք է: Պէտք է տօնելին ու այն էլ համազգային համադիտութեամբ տառերի գիւտի, Թարգմանչաց, Աստածաշունչի քարգամաւորեան եւ նման մեծ դէպքերը: Եւ պէտք է տօնելի համազգային ու փայլուն շուրջով նաեւ Սասունցի Գարբի հազարամակը: Այս կարգի տօներն ու հանդէսները ծառայում են ազգի մտաւոր ու բարոյական մակարդակի բարձրացման, իսկ մեր օրերին՝ նաեւ ազգապահպանութեան հրամայական պահանջին:

Կարծիքները սկսում են տարբերել, երբ խնդիրը վերաբերում է անհատների յոբելեանին. ումանք, առհասարակ, ժխտում են նման յոբելեանների կարեւորութիւնը, ուրիշներ՝ հակառակն են պնդում: Այստեղ էլ, մեզ քում է, հարկաւոր է որոշ գանձաւորութիւն դրնել: Պէտք է տարբերել մեռածներին ողջերից. մեռած մարդիկ, իրենց գործերով, սեփականութիւն են պատմութեան եւ պէտք է դիտարկել, որպէս այդպիսին: Եթէ կան ազգի մեծութիւնը որոշող խառն դէպքեր, որոնք իրենց հոգե-

կան ու մտաւոր վաստակով նոյնացրել են ազգային կեանքը, որոնց վերջիշումը այսօր էլ կարող է զարկ տալ ազգային վերելքին — ինչո՞ւ չտօնել այդպիսիների յոբելեանը: Մի՞ նարեկացի, մի՞ Բուչակ, մի՞ Սայաք — Նովա, մի՞ Խըրիմեան, մի՞ Բաֆֆի, մի՞ Թումանեան, մի՞ Կոմիտաս եւ շատ ուրիշ երեսիլի դէպքեր՝ հայ ստեղծագործ համնարի հսկաները արժանի են յաջորդ սերունդների յարգանքի եւ երաստագիտութեան, եւ յոբելեանական հանդէսը լաւագոյն միջոցն է մեր զգացմունքների արտայայտութեան եւ միաժամանակ նրանց անունի օգտագործման յօգուտ ազգային դատի: Բաւական է յիշել, քէ Բաֆֆիի ծննդեան հարիւրամեայ տարեդարձի հանդիսութիւնները ինչպիսի՞ բարերար ազդեցութիւն ունեցան Արտասայաստանի հայութեան կեանքի վրա:

Խնդիրը հիմնովին փոխում է, երբ խօսքը գալիս է ապրող անհատների յոբելեանին: Մեզ մօտ ընդունւած սովորութիւն է աջ ու ձախ յոբելեաններ կազմակերպել ապրող մարդկանց մասին, յաճախ տաանց հաշի առնելու անհատի արժէքն ու արժանիքը, որով յոբելեանի նշանակութիւնն էլ նստմանում է: Յոբելեանը հանրային երաստագիտութեան ու յարգանքի արտայայտութեան բարձրագոյն ձևն է: միայն բացառիկ արժանիքի տէր անձեր արժանանում են նման գնահատութեան, եւ այդ պատճառով ֆաղափակիքը աշխարհում լիստ սակաւ են նման յոբելեանները: Ամէն

ազգի մէջ մատի վրա են համարում յոբելեանի արժանի անհատները, իսկ մեզ մօտ...

Եւրոպայում ենք սպրում եւ պարտաւոր ենք մենք էլ փառաբանելու ազգերից օրինակներ առնել — չհետեւիլ կուրորէն. չկապկել, այլ գիտակցօրէն փոխ առնել լաւագոյնը: Մեր յոբելեաններն էլ պէտք է լինեն այն անձերի համար, որոնք բացառիկ ծառայութիւն են մատուցել ազգին, որոնք հանրամասն աքժէֆներ են տեղ ազգին: Այդպիսիների քիւր մեծ չէ, բացառիկ անհատներ են դրանք, հետեւաբար, եւ յոբելեաններն էլ պէտք է լինեն սակաւաքիւ: Յոբելեաններ ա՛յն վաստակաւոր դէմքերի, որոնք արդէն տեղ են ինչ որ իրենց հանճարը կարող էր տալ եւ մտեւնալով կեանքի շէմքին՝ իրաւունք ունեն սպասելու երախտագիտութեան ազգի կողմից: Իբրեւ այդպիսին, մենք այսօր արտասահմանում կարող ենք ցոյց տալ ֆիլայն մէկ անձ, որ արժանի է նման յոբելեանի եւ որի շուրջ կարող է ստեղծել ազգային միութիւն — Լեւոն Շանքը. որ երկար տարիների գործունէութեան եւ իր արտակարգ կարողութեամբ անգլիկ գանձերով նոխացնելով Հայոց մշակոյթը՝ կանգնած է արդէն կեանքի 70-ամեակի շէմքին: Այդպիսի մի յոբելեան կը լինի իրական տօն մեր ազգի համար:

Վեր առնենք հարցի եւ մէկ ուրիշ կողմը. որի շուրջ նոյնպէս կարծիքների միութիւն չկայ. ի՞նչը պէտք է լինի յոբելեանի նպատակը՝ բարոյական գնահատումք. քէ՞ն նիւթական վարձատրութիւն: Մեզ մօտ, կարծես, վերջին տեսակետն է գերակշռողը — ապրուստի միջոց հայրայրի յոբելեարին, քէն այս մասին վաղուց Գամառ — Ֆարիպան տեղ է ընդհանուր դատաւնիւրը — *Ողբալի սոյ կը դուք, Հայեր, աւճ, 2Եր յոբելեանը՝ մուրացկի դարալի:*

Յիրաւի, մեր յոբելեանները, շատ

յանալ, «մուրացկի դարալ»-ի են վերածում:

Ո՞րն է յոբելեանի մէջ էականը՝ դրա՞մը, քէ՞ բարոյական վարձատրութիւնը: Այս հարցի պատասխանը, մեր կարծիքով, լրիւ եւ լաւագոյն ձեւով տեղ է Ա. Ահարոնեանը:

1916 քւին, Կովկասում, արժարուեց Ա. Ահարոնեանի գրական գործունէութեան յոբելեանը կատարելու եւ դրանով նրա նիւթական աջակցութիւն հասցնելու խնդիրը: Ահարոնեանը մերժեց այդ առաջարկը եւ այդ առիւտ գրեց Բագուի «Արեւ»-ում (№ 273) հետեւեալը. — «Ասում են՝ հայ գրագէտի, հայ գրականութեան խնդրեան, անապահովութեան մեղքը ամբողջապէս ծանրանում է հայ ազգի վրին: Եւ ամէն անգամ, երբ որ եւ է հայ հեղինակի կուսակցանում կամ մեռնում է գրկանքների մէջ, այս իրն ու ձանձարալի քեման յեղուում է հազար ու մի ձեւերով:

«Թող ներսի ինձ ասել, որ ես այս հայեցակէտը չեմ բաժանել եւ չեմ բաժանում քեւ. իմ խորին համոզումն է հայ գրագէտի. բանաստեղծի վիճակը իր իսկ ժողովրդի վիճակի նշգրիտ պատկերն է, նրա մանրանկարն է, որ հեշտ է ցուցատրում: Ինչ որ է հայ ազգը, նոյնն են եւ պէտք է որ լինեն հայ մտքի եւ արեւստի ղեկավարները:

«Ես անկիւն կասեմ. երբ մի ժողովրդի ֆիզիքական գոյութիւնն իսկ վտանգի տակ է, երբ նա խոշտանգւած ու արիւնլայ՝ գլուխ ղնելու տեղ իսկ չունի — մեզ է, անիրաւութիւն է պահանջել, որ նա իր գրագէտներն ու իր գրականութիւնն ապահովի: Հայ մտքի, հայ տեղիւնագործութեան վա՛րայ եւ ներք պէտք է որ անտրտունջ կրեն իրենց տառապող գեղին վիճակուած ծանր խաչը, մինչեւ որ կը հասնին լաւագոյն օրեր: Անգլիացի գեղագէտ փիլիսոփայ Ռէսկին մէկ տեղ իրաւացի կերպով ասում է. «Այն աշխարհում, ուր հիւժուած մա-

նուկները կապում շրթունքներով իրենց մայրերի ցամաքած ստիմեններից բոյն են ծծում կաթի փոխարէն, յանցանք է գեղարեւստի մասին մտածել...»: Իսկ մեր աշխարհում... Ա՛հ, մեր աշխարհը... » :

Ա. Ահարոնեանի այս տեսակէտը այսօր էլ դեռ մնում է միշտ. «երբ մի ժողովրդի ֆիզիկական գոյութիւնն իսկ վտանգի տակ է», «մեղք է, անիրաւութիւն է պահանջել», որ այդ ժողովրդի մեծ մարդիկ ազգի ընդհանուր վիճակից տարբեր վիճակ ունենան. ազգի մեծերը պատկերն են նոյն ազգի:

Ամփոփենք, ուրեմն, մեր ասածները:

Յոբելեանները անհրաժեշտ են եւ օգտակար, իրրեւ ազգի մեծագործութեան եւ անցեալ փառքի յիշատակութիւն, իրրեւ աղբիւր նոր սերունդների ոգեւորութեան եւ հպարտանքի:

Պէտք է տօնել ազգային հեռաւոր ու մօտիկ անցեալի մեծ գործերը եւ երեւելի դէմքերը:

Պէտք է յորհիւնական հանդէտով պատուել նաեւ ապրող մեծ եւ համազգային նախաշումի արժանացած դէմքերին:

Յոբելեանը պէտք է լինի առիթ բարոյական վարձատրութեան եւ համազգային գնահատութեան:

